ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ/ ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ ՄԱՅՐԵՆԻ ԺԱՄԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՊԱՀԱՆՋՆԵՐԸ*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ *ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ՀԱՄՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ԳԵՂԵՑԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ԴՊՐՈՑ՝ *ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈԼԱՔԱՐԻ Ալ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ*

Ք. Մարտունի

2022թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղահովիտ գյուղի √2 միջնակարգ դպրոց

ՊՈՍԱԿ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1 ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԸՆԿԱԼՈՒՄ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4

1 . 1 ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԺԱՄԵՐԻՆ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 7

ԳԼՈՒԽ-2 ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ 10

2 . 1 ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ուսումնասիրության թեման արդիական է երկու առումով՝

1) ընթերցասեր սերնդի դաստիարակությունը և հետևաբար ընթերցող հասարակության ձևավորումն այսօր արդիական խնդիր է ամբողջ աշխարհում. այդ գործընթացում մեծ է մայրենի լեզվի ուսուցման և դրա ներսում՝ ինքնուրույն ընթերցանության բաղադրիչի կատարած դերը, քանի որ երեխային գրքին կապելու և դրա շնորհիվ ճանաչողական գիտելիքների հարստացման տեսանկյունից ինքնուրույն ընթերցանությունը, կարևոր նշանակություն ունի:

2) Մյուս կողմից՝ դիտարկվում է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ աշակերտի՝ գրական գիտելիքների հարստացման աշխատանք կատարելու հմտությունն ու ճանաչողական ունակությունների զարգացումը: Հարկ է նկատել, որ ինքնուրույն ընթերցանությունը մեծ ազդեցություն ունի երեխայի մտածողության զարգացման ու անհատականության ձևավորման գործում, իսկ ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունը զարգանում է անհատական և խմբային ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառմամբ, որոնք նրանք կատարում են տանը և դպրոցում:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է բացահայտել գրական տարրական գիտելիքների նշանակությունը կրտսեր դպրոցականների ճանաչողական գիտելիքների հարստացման և ճանաչողական ունակությունների զարգացման գործում: Այս նպատակով մեր աշխատանքում առաջադրել ենք **հետազոտության** հետևյալ **խնդիրները.**

- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականի անցումային փուլերը և հարմարման առանձնահատկությունները,ընկալում, հիշողություն, ուշադրություն, մտածողություն
- Վերլուծել երեվակայության զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում
- Ուսումնասիրել տարրական դասարաններում ընթերցանության դասերի կազմակերպման մեթոդիկան և առանձնահատկությունները
- Վերլուծել տարրական դասարաններում ընթերցանության դասերի կազմակերպման նպատակներն ու խնդիրները

Գլուխ 1 ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԸՆԿԱԼՈՒՄ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցական տարիք, անհատի օնտոգենետիկ զարգացման փուլ, մանկության գագաթնակետը: Երեխան պահպանում է մանկական շատ որակներ՝ թեթևամտությունը, միամտությունը: Բայց նա արդեն սկսում է կորցնել մանկական անմիջականությունը վարքում, նրա մոտ առաջանում է մտածողության ուրիշ տրամաբանություն: Ուսումը նրա համար նշանակալից գործունեություն է: Դպրոցում երեխան ձեռք է բերում ոչ միայն նոր գիտելիքներ, կարողություններ, այլև որոշակի սոցիալական կարգավիճակ: Փոխվում են հետաքրքրությունները, արժեքները, երեխայի կյանքի ամբողջ դրվածքը[1]:

Կրտսեր դպրոցականների բարոյական գիտակցությունը էական փոփոխությունների է ենթարկվում առաջինից մինչև չորրորդ դասարաններում: Բարոյական գիտելիքները, պատկերացումները և դատողությունները տարիքի վերջում նկատելիորեն հարստանում են , դառնում ավելի գիտակցված, բազմակողմանի ,ընդհանրացված :[4,42] Եթե 1-2-րդ դասարանների աշակերտների բարոյական դատողությունները հիմնվաց են սեփական վարքի փորձի վրա և ուսուցչի ու ծնողների կոնկրետ ցուցումների ու պարզաբանումների վրա (որոնք երեխաները հաճախ կրկնում են. ոչ միշտ խորհելով դրանց բովանդակության վրա), ապա 3--4-րդ դասարանների աշակերտնեռը, բացի իրենց վարքի փորձից որը մեծերի ցուցումներից փորձում են վերլուծել ուրիշ մարդկանց փորձը: Զգալիորեն ավելի մեծ ազդեցություն է ունենում գրականության ընթերցումը, մանկական կինոնկարների դիտումը համանման ձևով ձևավորվում է նաև բարոյական վարքը: Յոթ---ութ տարեկան երեխաները կատարում են դրական բարոյական արարքներ, ամենից հաճախ հետևելով մեծերի, մասնավորապես ուսուցչի, ուղղակի ցուցումներին. 3-4-րդ դասարանների աշակերտներն անհամեմատ ավելի մեծ չափով կարողեն կատարել այդպիսի արարքներ սեփական նախաձեռնությանբ, առանց ուրիշների ցուցումների: Կրտսեր դպրոցական տարիքում բնավորությունը նոր է սկսում կազմավորվել: Կրտսեր դպրոցականների բնութագրաբանական դրսևորումները կարող են աչքի ընկնել հակասականությամբ և անկայունությամբ: Այդ պատճառով երբեմն սխալմամբ իբրև բնավորության գծեր կարող են ընդունվել ժամանակավոր հոգեկան վիճակները: Լ.Դ. Լևիտովը բերում է այդպիսի մի սխալի օրինակ : Առաջին դասարանի ուսուցչուհին իր աշակերտուհիներից մեկին համարում էր համառ աղջիկ , որը կարող էր հաղթահարել դժվարությունները, ամեն մի գործ հասցնել իր ավարտին: Մինչդեռ փորձառու հոգեբանի օբյեկտիվ դիտումները ցույց տվեցին, որ աղջնակի համառությունը ժամանակավոր հոգեվիճակ է, որն առաջանում է միայն որոշակի

[1] **Ջ. Գյուլամիրյան,** Տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ», 2001, N1, էջ 22:

պայմաններում . երբ նա տեսնում է իր ընկերուհու օրինակը և երբ , բացի դրանից, նրա գործունեությունը հաջող է: Անհաջողությունները նրան հանում են հունից:Կրտսեր դպրոցական տարիքում բնավորության տարածված թերությունները քմահաճությունը, կամակորությունը բացատրվում են ընտանեկան դաստիրակության թերություններով: Երեխան ընտելացել է այն բանին, որ իր բոլոր ցանկություններն ու պահանջները բավարարվեն: Քմահաճությունը և կամակորությունը երեխայի բողոքի յուրատեսակ ձև է ընդդեմ այն հաստատուն պահանջների, որ նրան ներկայացնում է դպրոցը:Կրտսեր դպրոցականի բնավորության տարիքային առանձնահատկություններից են նաև այնպիսի դրական գծեր, ինչպիսիք են զգայունությունը (զգայուն վերաբերմունքը), հետաքրքրասիրությունը , անմիջականությունը, դյուրահավատությունը: Տարիքային կարևոր առանձնահատկություն է ընդօրինակումը. կրտսեր դպրոցականները ձգտում են ընդօրինակել մեծերին և որոշ հասակակիցների, ինչպես նաև սիրվաց գրքերի ու կինոնկարների հերոսներին : Կարևոր է անձնական օրինակով դաստիրակելը սակայն միայուս կողմից, պարունակում է նաև որոշ վտանգ . կրտսեր դպրոցականը ընդօրինակում է ո'չ միայն դրականը[2]:

Անձնային, ֆիզիկական, սոցիալական գործոններից և առանձնահատկություններից ելնելով՝ տարբեր աշակերտներ տարբեր կերպ են հաղթահարում այս փուլը: Գոյություն ունեն հարմարման տարբեր մակարդակներ՝

- բարձր մակարդակ՝ առաջին դասարանցին դրական է վերաբերվում դպրոցին, ներակայացվող պահաջների հանդեպ ունի ադեկվատ վերաբերմունք; հեշտ է յուրացնում դպրոցական նյութը; խորքային և լիարժեք ընկալում նյութը; կարողանում է լուծել բարդեցված խնդիրներ; պատասխանատու է, կատարում է հանձնարարականները; հետաքրքրվածություն է ցուցաբերում; հաճույքով է հաճախում դպրոց:

- հարմարման միջին մակարդակ՝ առաջին դասարանցին հաճույքով է հաճախում դպրոց, հասկանում ուսուցչի հրահանգները; հեշտ է յուրացնում ուսումնական նյութը, եթե ուսուցչի բացատրությունները հստակ են և ակնառու; կենտրոնացված է, եթե նյութը հետաքրքրում է իրեն; կարողանում է լուծել տիպական խնդիրներ, սակայն մեծահասակի վերահսկման դեպքում; ընկերություն է անում դասարանցիների հետ, պարտաճանաչ է:

- ցածր մակարդակ՝ երեխան բացասաբար կամ անտարբեր է դպրոցի հանդեպ; հաճախ սկսում է հիվանդանալ; գերակայում է ճնշված տրամադրությունը; բացատրված նյութը յուրացնում է ոչ լիարժեք և ամբողջովին; դասագրքի հետ ինքնուրույն աշխատանքը դժվար է; անհրաժեշտ է մշտական վերահսկողություն; բացակայում է մոտիվացիան, հետաքրքրությունը; ձգտում է երկարատև հանգստի և դադարների և այլ:

[2] Տեր-Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1980թ., 317 էջ:

Հարմարման դժվարություններ ունեցող երեխաները կարող են դրսևորել տարաբնույթ վարքաձև և ունենալ բազմաթիվ խնդիրներ: Ոմանց կարելի է բնութագրել որպես անուշադիր, կենտրոնացման դժվարություններ ունեցող, կանոններին չենթարկվող: Ոմանք կարող է դրսևորեն դիմադրություն, ակտիվ բողոք, լինեն գերզգայուն, աֆեկտիվ, նեգատիվիզմով լի, ագրեսիվ: Ընդ որում, այսպիսի դեպքերում որևէ պատժամիջոց չի ազդում: Որոշ երեխաների մոտ սկսում է գերակայել տագնապալիությունը, տրամադրության անկումը, նրանք հաճախ հուզվում են, լաց լինում: Դժվար հարամարվող երեխաների մոտ կարող են առաջանալ կամ վերականգնվել վնասակար սովորությունները՝ եղունգների կրծում, մատի ծծում, օնանիզմ և այլ:

Հարամարմանը նպաստում է հանգիստ, հարգալից և համբերատար մոտեցումը երեխային, երբ նրան չեն շտապեցնում, լարում, ծանրաբեռնում բազում առաջադրանքներով: Երեխան չպետք է ճնշված կամ վախեցած զգա իրեն: Օգտակար չեն նաև ծաղրանքը, բացասական վերաբերմունքն ու պատիժները[3]:

Հարմարման ընթացքում երեխայի մոտ կարող են ձևավորվել վարքային խնդիրներ, որոնք ազդանշում են մեծահասկաներին հարմարման դժվար ընթացքի մասին: Հիմնականում դրանք ագրեսիվ և տագնապային դրսևորումներն են: Երեխայի հարմարման կարևոր ցուցանիշ է նրա հուզական վիճակը, տրամադրության դրական ֆոնը և դպրոց հաճախելու ցանկությունը: Սոցիալական հարմարմանը կարող են մեծապես նպաստել մեծահասակները՝ ձևավորելով երեխայի մոտ սեփական գործունեության պլանավորումը, քայլերի վերլուծությունը, լսելու կարողությունը, ուսուցչի հրահանգներին արձագանքելը, միջանձնային հարաբերությունների հաստատումը, հասակակիցների հետ շփումը, սեփական և ուրիշի գործողություններին ադեկվատ գնահատականի տալը:

Պատրաստվածությունը իր մեջ ներ է առնում հետևյալ կարևոր բնութագրականները՝

- միջին դպրոցում սովորելու կարողությունների ձևավորում – այս նպատակին հասնելու համար կարևոր է երեխաների մոտ ձևավորել պատկերացումներ միջին դպրոցի մասին, այնտեղ սովորելու կարողություններ մասին, ինչին կարելի է հասնել բազմաբնույթ քննարկումների կազմակերպման շնորհիվ; կարևոր են նաև երեխայի իմացական գործընթացների զարգացվածության բարձր աստիճանին հասնելը, այսինքն նպատակաուղղված առաջադրանքների կիրառումը ուշադրության, տրամաբանական մտածողության զարգացման ուղղությամբ;

1. [3] Էլոյան Տ.Ս “Ուսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները” - Երևան: Լույս, 1980

- սեփական անձի մասին պատկերացումների ձևավորում
- ուսումնական մոտիվացիայի, հետաքրքրությունների ձևավորում;
- հասակակիցների հետ համագործակցության ընդունակությունների զարգացում, մրցակցելու ունակություն, սեփական ձեռքբերումների ադեկվատ գնահատում;
- ինքնավստհության զարգացում:

1.1 ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԺԱՄԵՐԻՆ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Կրտսեր դպրոցականների երևակայությունը, շնորհիվ նախադպրոցական, խաղային գործունեության, համեմատաբար լավ է զարգացած, քան մյուս հոգեկան պրոցեսները: Դպրոցական ուսուցումը նոր պահանջներ է դնում նրանց երևակայության առջև: Երեխաները ընթերցանության և պատմության դասերին ոչ միայն պիտի սովորեն նյութը, այլև պատկերացնեն ու մտովի վերականգնեն անցյալի իրադարձություններն ուղեմքերը, որոնց չեն տեսել: Սկզբնական շրջանում երեխաների երևակայությունը բնութագրվում է ունեցած մտապատկերների աննշան վերամշակմամբ: Հետզհետե նրանց մտապատկերները լրանում ու հարստանում են նոր տարրերով: Ռուս հոգեբան Իգնատևի գիտափորձերը ցույց են տվել, որ մանկական նկարների բովանդակությունը, տարիքի աճմանը զուգընթաց հարստանում է: Երևակայության զարգացմանը նպաստում են հիշողության նախկին պատկերները, որոնք երևակայական պատկերների համար դառնում են հոգեբանական <շինանյութ>:

Երեխաների երևակայության զարգացումը , ըստ անվանի հոգեբան Ժ. Պիաժեյի, անցնում է երեք հիմնական փուլ: Նախնական փուլը կապվում է սաստիկ պատկերների հետ, որոնք դրսևորվում են գրեթե առանց փոփոխությունների: Երկրորդը կինետիկ պատկերների փուլն է, որը համարվում է ստեղծագործական երևակայության նախադրյալը: Կրտսեր տարիքի երեխաների երևակայության տիրապետող տեսակը վերարտադրողական /ռեպրոդուկտիվ/ տեսակն է: Նրանք փոխում են պատմվածքների սյուժետային ուղղվածությունը, որոշ պատկերներ կրճատում, մյուսները՝ ընդարձակում: Հատկանշականն այն է, որ երեխաների երևակայությունը ուղեկցվում է բարձր հուզականությամբ, հատկապես նկարելիս, գույների ընտրություն կախված է նրանց տրամադրությունից ու հոգեվիճակից: Երևակայական մտապտկերները դառնում են երեխաների ստեղծագործական ընդունակությունների հոգեբանական հիմքը[4]:

[4] Венгер А.Л., Венгер Л.А. Готов ли ваш ребенок к школе? М., 1994.

Կրտսեր դպրոցականներին անհատական մոտեցում ցուցաբերել հնարավոր չի, եթե մանկավարժը չիմանա նրանց տարիքային և անհատական առանձնահատկությունները: Երեխաների ուսումնասիրությունը անհատական մոտեցման առաջին փուլն է միայն: Անհատական առանձնահատկությունների շարքին է դասվում առաջին հերթին ԲՆԳ-ի տիպը կամ երեխայի խառնվածքային հատկությունները: Ինչպես հայտնի է Պավլովի կողմից առաջ է քաշվել նյարդային 4 տիպեր, որոնք համապատասխանում են որոշակի խառնվածքի: Այս տարիքի հետ աշխատող մանկավարժը պարտավոր է իմանալ ամեն մի խառնվածքային տիպի հոգեբանական բնութագիրը: Թույլ տիպը համապատասխանում է մելանխոլիկ խառնվածքին: Նման դպրոցականները աչքի են ընկնում նյարդային գործընթացի թուլությամբ, նյարդային բջիջների թույլ աշխատունությամբ և արագ հոգնածությամբ: Նման երեխաներն ավելի շատ ժամանակ են ծախսում դաս սովորելու համար, ավելի անվստահ են, ծանր են վերապրում իրենց անհաջողությունները, դժվարությամբ են շփվում ընկերների հետ, սիրում են մեկուսանալ, սակայն հոգեբան Տեպլովը մելանխոլիկ տիպտ դրական կողմը համարում է բարձր զգայունակությունը, որը նրանց դարձնում է նրբանկատ, զգայուն ու շուտ տպավորվող:

Դասվարի համար կարևոր է կարողանալ նպաստել և զարգացնել ուշադրությունը դասի ընթացքում: Ն.Ֆ. Դոբրինինը պնդում է, որ աշակերտների ուշադրությունը լինում է կայուն և կենտրոնացված, երբ այդ աշխատանքը պահանջում է մտավոր և ֆիզիկական մաքսիմալ պահանջներ:

Եթե մասնակիցները դիտում են առարկաները, երևույթները և դրա հետ մեկտեղ հնարավորություն ունեն գործել նրանց հետ, ապա այդ դեպքում նրանք շատ ուշադիր են:

Անալիզ, առարկաների համեմատում, կարևորն երևույթների ընդգծումը, առարկաների որակական խմբավորումը, առարկաների միջև պատճառահետևանքային կապերի ձևակերպումը կարդացված թեմայում, ինչպես նաև մտածողության, այլ գործողություններ անհնար է առանց ուշադրության կենտրոնացում:

Ակտիվ մտածողության գործընթացը պահանջում է ուշադրություն:

Ուսուցչական փորձի հիման վրա Դոբրինինը կատարում է հետևություն այն մասին, որ մասնակիցների ուշադրությունը շատ դեպքում կախված է ուսուցանվող թեմայի հասանելիությունից:

Մասնակիցները հրապուրանքով աշխատում են այն բանի վրա, որը կարող է շատ դժվար լինել, բայց հասանելի, որը կարող է նրանց տալ որոշակի հաջողություններ:

Ուշադրությունը սերտորեն կապված է երեխաների զգացմունքների և հուզականության հետ: Կրտսեր դպրոցականները մեծ ուշադրությամբ լսում են ուսուցչի պատմածը և երկար ժամանակ մնում դրա ազդեցության տակ:

Ուշադրության վրա մեծ ազդեցություն են ունենում հետաքրքրությունները և պահանջները: II-III դասարանների աշակերտները հաճախ մոռանում են ամեն ինչի մասին,

ոգեշնչված գրում են շարադրություններ, ձևակերպում պատմվածքների նկարների օգնությամբ, հիշողության հիման վրա նկատում նոր նկարներ:[12,48]

Ստրոխովը գտնում է, որ մասնակիցներից մի մասի մոտ ուշադրությունը կարող է լինել փոփոխուն և երևակայական անփութությամբ և հավանականությամբ, մյուսների մոտ հաստատուն, կամային, գիտակցված, կենտրոնացված, որը աշակերտին թույլ է տալիս հաղթահարել շեղող խոչընդոտները, մյուս մասը՝ ուշադրությունը կարող է հետևել քիչ թե շատ ձևավորված մտավոր աշխատանքի սովորության ձևով:

Նրա կողմից հիմնավորվել է ուշադրության հետևյալ դրույթները.

1. Իրական ուշադրություն,
2. թվացյալ ուշադրություն,
3. իրական անուշադրություն:

ԳԼՈՒԽ-2 ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ընթերցանությունը տարրական դասարաններում անցկացվող դասընթացի հիմնական բաժիններից մեկն է, որն իրականացվում է մայրենի լեզվի միջոցով: Այն հանդիսանում է մայրենի լեզվով երևույթների մասին պատկերացումների և երևույթների ուսումնասիրման և յուրացման գործոն:

Ընթերցանության մեթոդիկայի պատմության համառոտ ակնարկը ցույց է տալիս, որ դեռևս հնում երեխաներին սովորեցնում էին կարդալ ու գրել, ընդ որում՝ հիմնականում կրոնական բովանդակություն ունեցող եկեղեցական գրքերի վրա, որոնք թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ լեզվական ձևով խորթ ու անհասկանալի էին նրանց: Հետագայում արդեն երեխաների հետաքրքրություններին ու ըմբռնումներին համապատասխանող ընթերցարաններ ստեղծելու պահանջը ծագեց Գերմանիայում՝ 18- րդ դարի սկզբերին, սակայն այդ տիպի առաջին դասագիրքը ստեղծվեց 1776 թվականին միայն՝ Է. Ռոխովի կողմից: Նրա «Մանուկների բարեկամ» ընթերցարանը, որում զետեղված էին 79 ինքնուրույն նյութեր՝ աշխարհիկ բովանդակություն ունեցող հոդվածներ, պատմվածքներ, խրատներ, երգեր, աղոթքներ ու առածներ, կարճ ժամանակում լայն տարածում գտավ և բազմաթիվ հրատարակություններ և հետևորդներ ունեցավ եվրոպական շատ երկրներում:[5]

Ընթերցանության մեջ են ամփոփվում ու նրա միջոցով են իրականացվում տարրական դասաններում երեխաների մեջ կարդալու տեխնիկայի ձևավորման և զարգացման, գործնական ճանապարհով լեզվի ուսուցման, աշխարհաճանաչողական տարրական գիտելիքների հաղորդման ծրագրային պահանջները: Հենց այդ նկատառումներով բոլոր ժամանակներում դասարանական ընթերցանությունը տարրական դասարաններում աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր և անփոխարինելի միջոցներից մեկն է համարվել:

Ինչպես գիտենք, տարրական դասարաններում ընթերցանության կազմակերպման ողջ <<բեռն>> ընկած է մայրենի լեզվի դասընթացի վրա: Հենց մայրենի լեզվի դասընթացի կարևոր բաղադրիչն է ընթերցանությունը, որի նպատակն է զարգացնել կրտսեր դպրոցականների կարդալու, վերարտադրելու կարողությունները, հարստացնել նրանց խոսքն ու բառապաշարը, ճանաչողական և լեզվական գիտելիքները, ձևավորել արժեքների համակարգ:

Կապակցված բնագրի ընթերցումը ևս իր առանձնահատկություններն ունի, որովհետև այստեղ տառի, վանկի ու բառի փոխարեն ընկալման միավորներ են դառնում ամբողջական

[5] Ս. Գ. Խաչատրյան ԼԵԶՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ՝ ԸՍՏ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԻ

նախադասությունները, որոնց ընկալումն ու միմյանց հետ կապակցումը երեխայի համար լուրջ դժվարություն է ներկայացնում[6]:

Դիտարկենք ընթերցանության ժամանակակից մոդելը..



Այսպիսով՝ դասարանային ընթերցանությունը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնելու ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնելու տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ «հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար»[7]:

[6] **Ա. Տեր-Գրիգորյան,** Գրաճանաչության մեթոդիկա, Երևան, 1968, էջ 26:

[7] **Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան**, Ընթերցանության դասաժամերի դերն ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում, «Նախաշավիղ», 2006, N6, էջ 34:

2.1 ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսուցիչը ինքը պետք է ընտրի աշակերտների ինքնուրույն գործունեության համար առաջադրվող հանձնարարությունները՝ ելնելով աշակերտների անհատական առանձնահատկություններից: Դա նշանակում է, որ սովորողների ինքնուրույնությունը չի զարգանում միայն աշակերտների անհատական աշխատանքների ընթացքում: Ինքնուրույն գործունեության բազմաթիվ կարողություններ, հատկապես սեփական ուժերը գնահատելու և սեփական գործի կարևորությունը գիտակցելու կարողությունները, պետք է զարգացնել խմբային աշխատանքների միջոցով: Սովորողների ներուժին համապատասխան ուսուցչի տրված առաջադրանքների կատարման արդյունքում նրանք աստիճանաբար ձեռք են բերում ինքնուրույն ընթերցելու, ընթերցածի շուրջ մտորելու, եզրահանգումներ կատարելու կարողություններ:

Դասարանային ընթերցանությունը հիմք է դառնում ինքնուրույն ընթերցանության համար, որը, զարգացնելով հասկանալով, ճիշտ և սահուն, արտահայտիչ կարդալու կարողությունները, կատարում է նաև այլ գործառույթներ.

1. Խոսքի զարգացում: Գիրք կարդալը երեխային ավելի համարձակ է դարձնում իր մտքերն արտահայտելիս: Աշակերտը կարողանում է ձևակերպել իր մտքերը, դառնում է ավելի ինքնվստահ:
2. Երևակայության զարգացում: Գիրքը հուզական բարենպաստ միջավայր է ստեղծում աշակերտի համար: Դրական անձանց, մարդկային կերպարով բույսերի, կենդանիների, շնչավորված առարկաների դերերը նպաստում են երեխաների երևակայության զարգացմանը:

Այսպիսով՝ անձի զարգացման, նրա արժեքային համակարգի, մտածողության ձևավորման գործում մեծ դեր է կատարում ընթերցանությունը: Գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների վերլուծությունը, պատմումը դպրոցականների մեջ որոշակի արժեքների ստեղծման կարևոր ազդակ է դառնում:

Ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացմունքային ապրումները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի ինքնարտահայտման, այնպես էլ ուսումնական-ստեղծագործական գործունեության հիմքերին:

Նշենք, որ տարրական դասարանում մայրենի լեզվի դասընթացը բաժանվում է երկու բաժինների՝ լեզվական նախագիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ: Ե՛վ նախագիտելիքները, և՛ լեզվական տարրական գիտելիքները անցնում ենք համակցված ձևով, ընթերցանության հետ համատեղ: Կարծում ենք, որ տեղին է նկատել պրոֆ. Ա.Ե. Տեր-Գրիգորյանը՝ ասելով. «Մայրենի լեզվի տարրական դասընթացը քերականական

նյութերը վերցնելիս աչքի առաջ է ունենում աշակերտների ընդունակություններն ու ընկալման հնարավորությունները, նրանց լեզվական պաշարը և ուսուցանելիք նյութերի գործնական արժեքը…»:[8]

Այսպիսով, տարրական դասարանում ընթերցանության կազմակերպման առանձնահատկությունները կապված են փուլային մեթոդով անցկացման եղանակի հետ: Այսինքն, դեռևս առաջին դասարանում աշակերտներն ուսումնասիրում են լեզվի հնչյունաշարը (այբուբենը), տարբերակում են ձայնավոր և բաղաձայն հնչյունները, որոշ չափով ծանոթանում դրանց ուղղագրությանը, որն ամրապնդվում է հաջորդ դասարաններում: Դրան պետք է ավելացնել մեծատառերի ուղղագրության վերաբերյալ այբբենական մասում անցածը, պետք է առաջադրվի նաև բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող կամ գրությամբ ու արտասանությամբ տարբերվող բառացանկ՝ ուսուցանելով զուտ գործնական ճանապարհով, առանց կանոնարկման: Արդեն երկրորդ դասարանում դասագրքերը կազմված են լինում թեմատիկ խմբավորման սկզբունքով և ընդգրկում են կրտսեր դպրոցականների աշխարհընկալմանը համապատասխան նյութեր՝ նպատակ ունենալով դաստիարակել, զարգացնել կրտսեր դպրոցականի երևակայությունը, մտածողությունը, խոսքը, կարդալու կարողությունը, ձևավորել ինքնուրույն, ինքնավստահ, հոգեպես ու մարմնապես առողջ անձ: Երրորդ դասարանում արդեն սկսում են անցնել ուղղագրություն: Մայրենի լեզվի տարրական դասընթացի առանցքային հարցերից մեկը ուղղագրության ուսուցումն է: Երրորդ դասարանում պետք է կրկնել մինչև այդ անցած քերականական, հնչյունային ուղղագրությանը վերաբերող բառերը՝ զգալի ավելացումով: Այս դասարանում ևս գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերի ցանկը պետք է ավելացնել՝ դրանց ուղղագրությունը գործնական ճանապարհով սովորեցնելու պայմանով, հաճախակի կրկնելու և փոքրիկ բառախմբերով առաջադրելու ձևով:

Մայրենիի դասերի պարբերաբար լսումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի ընթերցումը պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի անարդյունավետ ու ձանձրալի չլինի: Սովորաբար ընթերցանության մեթոդի բաղադրատարրեր են դառնում՝

- … զրույցը,
- … բնագրի ընթերցումը,
- … բառային աշխատանքը,
- … պատմումը,
- … ամփոփումը[9]:

[8] Տեր-Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1980թ., 317 էջ:

Սովորողների ընթերցման գնահատումը պայմանավորված է ձեռք բերած որակական հատկանիշներով, որոնցով պայմանավորված է ինքնուրույն ընթերցանությունը: Այդ որակներն են՝

- ✓ ճիշտ կամ անսխալ կարդալ,
- ✓ հասկանալով կամ գիտակցորեն կարդալ,
- ✓ վարժ կամ սահուն կարդալ,
- ✓ արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,
- ✓ արագ կարդալ:

[9] **Ջ. Գյուլամիրյան,** Տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ», 2001, N1, էջ 22:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2-4-րդ դասարաններում անցկացվող ինքնուրույն ընթերցանության դասաժամերը ցույց են տալիս, որ արտադասարանական ընթերցանության ճիշտ կազմակերպումն ու դասարանային ընթերցանության ժամանակ համապատասխան մեթոդների գործադրումը ոչ միայն հետաքրքրություն է առաջացնում ընթերցանության նկատմամբ, ձևավորում է կրտսեր դպրոցականի արժեհամակարգը ու խոսքը, այլև նպաստում է աշակերտների ճանաչողական գիտելիքների հարստացմանը, կարևոր դերակատարում ունենում աշակերտների մտածողության, տրամաբանության զարգացման գործում:

Աշակերտների հարցումից ստացվող տվյալների վերլուծությամբ պարզ է դառնում, որ՝

ա) ընթերցանությունը որոշ չափով նվազեցնում է համացանցի ունեցած վնասակար ազդեցությունը,

բ) աշակերտներին ընթերցանության ժամանակ գրավում են նաև գրքի ձևն ու չափը, նկարազարդումները, պատկերները, որոնք հետաքրքրություն են առաջացնում ընթերցանության նկատմամբ:

Այսպիսով՝ մեր հետազոտությունը թույլ տվեց գալու հետևյալ եզրակացությունների.

1. Մայրենիի դասընթացում կարևորագույն դեր է կատարում ինքնուրույն ընթերցանության բաղադրիչը. այն ունի սովորողի ընթերցողական կարողությունները զարգացնելու և ընթերցասիրություն ձևավորելու կարևոր նշանակություն:

2. գրական տարրական գիտելիքների հարստացմանը մեծապես նպաստում է սովորողի ճանաչողական գիտելիքների հարստացման և արժեհամակարգի ձևավորման գործընթացին, ուստի ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված ստեղծագործությունների վերլուծությունն ու քննարկումը պետք է կազմակերպվի նաև այդ նպատակի առավելագույն արդյունավետ իրականացման հաշվառմամբ:

3. Ճանաչողական գիտելիքների հարստացման արդյունավետ կազմակերպման համար կարևոր է ինքնուրույն և դասարանային ընթերցանությունների միջև կապի ստեղծումը. եթե ինքնուրույն ընթերցանության համար հանձնարարվող գրականությունն իր ճանաչողական կամ դաստիարակչական բովանդակությամբ անմիջականորեն առնչվում է արդեն ուսումնասիրված կամ զուգահեռ ուսումնասիրվող թեմաների հետ, լրացնում է դրանք, ապա լրացուցիչ հնարավորություն է ընձեռնվում ուսուցչին՝ առավել ընդգրկուն և խորը դարձնելու քննության առնված հարցերի ուսուցման գործընթացը:

4. գրական տարրական գիտելիքենրի հարստացումը նպաստում է նաև աշակերտի բառապաշարի հարստացմանն ու կապակցված խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. В.А.Левина «Когда маленький школьник становится большим читателем» М., 1994, 45 ст.Божович Л.И. Личность и его формирование в детском возрасте. М.,1968.
2. **Кукшина Ю.,** Чтение как творческая деятельность, Основы общей психологии, СПб., 1998:
3. **Мануэл А.,** История чтения, Екатеринбург, 2008
4. Ա. Ս. Ղարիբյան, Մեթոդական ուղեցույց: Հայոց լեզվի և գրական ընթերցանության մասին: (Դպրոցական գործի ղեկավարների համար): Եր. - 1944. - 29 էջ
5. **Ա. Տեր-Գրիգորյան,** Ընթերցանության մեթոդիկա, Երևան, 1978:
6. **Աբովյան Խ.,** Երկերի լիակատար ժողովածու, հ.5, Երևան, 1950:
7. **Աղայան Ղ.**, Երկեր, հ.4, Երևան, 1940:
8. **Ավագյան Լ.**, Ինքնուրույն ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականի մտածողության զարգացման միջոց, «Մանկավարժության զարգացման հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015:
9. **Գալստյան Ա., Բալայան Ա. և ուրիշներ**, Ինքնուրույն ընթերցանության ձեռնարկների մեթոդական կառույցը՝ որպես սովորողների հասկանալով կարդալու կարողության ձևավորման միջոց, Տարրական դպրոցի զարգացման հեռանկարները 21-րդ դարում, Երևան, 2014:
10. **Գալստյան Ա., Խարազյան Ռ. և ուրիշներ**, Ինքնուրույն ընթերցանություն 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարանների համար, Էդիթ Պրինտ, Երևան, 2010:
11. **Գյուլամիրյան Զ.,** <<Մայրենի լեզու>> դասագրքի մեթոդական ուղեցույց, երևան, 2004:
12. **Գյուլամիրյան Զ.**, Խաղալով սովորենք, Զանգակ 97, Երևան, 2009:
13. **Գյուլամիրյան Զ.,** Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:

Դ ա ս ա պ լա ն

Ուսուցիչ՝ Գեղեցիկ Խաչատրյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	08.11.2021	Կիսամյակ	I	Դասարան	I
Թեմա՝	«Ա» հնչյուն –տառի ուսուցում:						
Օգտագործվող նյութեր՝	Տառապատկերներ, քարտեր, պաստառներ, պրոյեկտոր, էկրան, մրգեր և բանջարեղեն՝ զամբյուղներով, տերևներ, Ա-ի մեծադիր տառապատկերներ, դիմակներ և այլն:						
Դասի նպատակը՝	Ուսուցանել «Ա» հնչյուն –տառը , հյուսել պատմություն թեմատիկ նկարի շուրջ, ամրապնդել պատմություն –բառ-վանկ-հնչյուն-տառ շղթան, հարստացնել բառապաշարը, ամրապնդել բառի հնչյունային վերլուծությունը:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Կիմանան կարդալ ու գրել «Ա» հնչյուն –տառը, տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել նկարի բովանդակությունը, գործնականում կիրառել բառակապակցության գիտելիքները, նկարագրել, բնութագրել կերպարները:						

Գործողություն-ներ (ժամ/ տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
Խթանում-3ր Իմաստի ընկալում-25ր Կշռադատում -10ր Տնային հանձնարարություն-3-5ր. Անդրադարձ -2ր.	Նախորդ դասի ամփոփում, նոր դասի նախապատրաստում :	Ողջույնի խոսք, հարցեր և պատասխաններ, «Ա» հնչյուն –տառի մասին գիտելիքներ, նկար-պատմության ցուցադրում, սահիկների ցուցադրություն, տառի գրություն, բեմականացում, ամփոփում, վկայականի հանձնում:	Դասի վերաբերյալ հարցեր	Մտագրոհ, հարց և պատասխան Կռահի՛ր, խաղային, դերային
Տնային աշխատանք				

Մեթոդմիավորման նախագահ՝ _____

Փոխտնօրեն՝ _____

Դ ա ս ա պ լա ն

Ուսուցիչ՝ Գեղեցիկ Խաչատրյան

Առարկա՝	**Մաթեմաիկատ**	**Ամսաթիվ**	**08.11.2021**	**Կիսամյակ**	**I**	**Դասարան**	III
Թեմա՝	Կլոր տասնյակների բաժանումը միանիշ թվի:						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, աշխատանքային տետր, երկրաչափական պատկերներ, թեմային վերաբերվող պաստառներ:						
Դասի նպատակը՝	Սովորեցնել կլոր տասնյակների բաժանումը միանիշ թվի, կրկնել աղյուսակային բաժանումը և բազմապատկումը, ամրապնդել գործողությունների կատարման կարգը, ամրապնդել համագործակցելու և խմբերով աշխատելու կարողությունները:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Կարողանան կլոր տասնյակները բաժանեն միանիշ թվի, կատարեն վարժությունները և ամրապնդեն անուղղակի խնդիրների լուծման ձևերը:						

Գործողություն-ներ (ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** *Աշակերտներ*	**Ուսումնական գործունեություն** *Ուսուցիչ*	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդ (ներ)**
Խթանում-3ր **Իմաստի ընկալում-25ր** **Կշռադատում -10ր** **Տնային հանձնարարություն-3-5ր.** **Անդրադարձ -2ր.**	Աշակերտները վերհիշում են տասնյակները, թվարկում են, կլոր տասնյակներրը (ամենամեծը, ամենափոքրը) կատարում են գործողություններ:	Հարց ու պատասխանի միջոցով կատարվում է մտագրոհ, վերհիշում են բաժանումը, բազմապատկումը կլոր տասնյակները, կատարում է վարժություններ, աշխատում են դասագրքով, տրվում է ինքնուրույն աշխատանք և այլն:		Մտագրոհ, հարց և պատասխան, կռահի՛ր:
Տնային աշխատանք	*Վարժությունների և խնդիրների լուծում:*			

Մեթոդմիավորման նախագահ՝ _____

Փոխտնօրեն՝ _____